

ԵԿԵՂԵՅԻՔ

ՎԱՂԱՐՇԱԿԱՏԱՅ ԿԱԹՈՂԻԿՆԵՐ

Ա.—ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՅԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՅԻՆ (Շարունիսիս)

Յամին 618, Կոմիտաս Կաթողիկոս, որ սուրբ Հռիփսիմէի վանքը շինեց, Յովհաննիկ անուն երիցու վանահայրութեան ժամանակին՝ Վաղարշապատայ Կաթողիկէ Եկեղեցւոյ փայտաշէն ծածկը վերցրուց, որ Մամիկոնեան Վահանայ ժամանակէն շինուած էր, շինեց զայն հոյսակապ Կաթողիկէիւ և կոփածոյ քարով. նորոգեց նոյնպէս և բոլոր խախտուած որմերը. որոյ համար կը գրէ Սեբէոս պատմիչ. «վերացոյց (Կոմիտաս) և զփայտաշարկս սրբոյ Կաթողիկէին. նորոգեաց և զեախուտս որմոցն. շինեաց զքարաշարկսն. այս եղև յամն Յովհաննիկ վանաց երիցու սրբոյ Կաթողիկէին,» :

Կոմիտասայ շինութենէն իբր 20 տարի ետքը նորոգութիւնարար ի Կաթողիկէն Վաղարշապատայ և Ներսէս Գ. Շիրող կոչեցեալ Կաթողիկոսն. և այս ինչպէս կ'երևի, որ ժամանակ շինեց նա սուրբ Գրիգոր անուամբ Եկեղեցին զարմացուցչին աեսողաց ասացեալ՝ յԱռապարին Վաղարշապատայ ինչպէս որ Ժողովոց պատմութիւնը կ'վկայէ, «Յարդարեալ շինէ սա զսուրբ Շողակաթն ի Նորքաղաքի, այն է Վաղարշապատ. որոյ Կաթողիկէն կ'անուանէր և Շողակաթ Եստուածածին, ինչպէս վերը գրեցինք :

Գվին քաղաքի բռնաւոր Եպիֆանոս միտայն՝ ըստ վկայութեան Եսողկայ՝ զոր վերը գրինք, որ Հռոմոսին վանքը (Գո-

շալանք) այրեց, Վաղարշապատայ Կաթողիկէ Եկեղեցւոյ՝ Խաչն ևս խորտակեց ճոպանօք վայր բերելով յամին 982:

Քանի որ Կաթողիկոսական Եթոռը Գվին էր և Կաթողիկոսք մերձ էին Վաղարշապատայ, խնամք ունէին այսպէս Կաթողիկէ Եկեղեցւոյ վրայ. իսկ երբ որ Կաթողիկոսական Եթոռը Շիրակ փոխադրուեցաւ Բագրատունեաց ժամանակը, գրեթէ անխնամ մնաց Կաթողիկոսաց ձեռնտուութենէն և կ'մնար ի խնամս վանահայրաց, և արևելեան Եպիսկոպոսաց Եզգիս՝ Ռուբինեանց օրովը:

Եպա 1441, Փրկչական թուին երբոր Կաթողիկոսական Եթոռը վերստին հաստատուեց ի Վաղարշապատ, և Կաթողիկոսն ստաւ Կիրակոս Վիրապեցին, ըսկսաւ սա նորոգել զԿաթողիկէ Եկեղեցին և Հայրապետանոցը: Սորան յաջորդելով Կարապետ Կաթողիկոս 1443 թուին թէ և արաւ և սա նորոգութիւն, բայց մահը վրայ հասնելով՝ երկու տարիէն ետքը, նստաւ Կաթողիկոս Գրիգոր մակուեցի 1445 ին, որ աւարտեց Կիրակոսի սկսած շինութիւնները ի Կաթողիկէն Վաղարշապատայ: Սա առաջինն եղաւ որ Հայրապետական Եթոռը Վաղարշապատ փոխադրուելէն ետքը՝ զիւր և կալուածներ առաւ աթոռոյ համար. զորոնք մի առ մի կնշա նակեմք ծանօթութեան մէջ, ինչպէս որ գրուած են թամբու անուանեալ Եթոռոյ յիշատակարան գրոց մէջ*):

(*) Աղանատուն վեց դանկ մուլք. Աշտարակ գիւղ վեց դանկ մուլք. Բաթոնիչ (Բագայառիձ) վեց դանկ մուլք.

Այս ժամանակէն սկսաւ այլազգեաց բռնակալութիւնը Վաթուղիկոսաց վրայ. որոնք շարունակ չկարողանալով նստել յԱջմիածին, իւրեանց տեղը փոխանորդ դնելով Աթոռոյն, իրենք աստանդական կ'ըջէին մինչև Սարմաստեցի Ստեփաննոս Վաթուղիկոսը 1541 թիւն: Սա թէ և մեծ փոյթ ունէր Աթոռը ծաղկեցնել, բայց երկրի խռովութեանց երեսէն ոչինչ չկարաց առնել. ուստի և իրեն Տեղապահ դնելով յԱջմիածին Սեբաստացի Միքայէլ վարդապետը, երբեմն թափառական կ'ըջէին, երբեմն յԱջմիածին կ'նստէին մինչև Մելքիսէթ Վաթուղիկոսը ցամ Տեառն 1593:

Այս ժամանակէն սկսեալ Վաթուղիկոսները ընկան պարտատէրների ու հարկապահանջներին բռնութեան տակ, և երկիրը ոտնակոխ եղաւ Պարսից և Տաճկաց պատերազմներէն. վասն որոյ և մինչև Սիւնեցի Մովսէս Վաթուղիկոսը Հայրապետական Աթոռը ի Վաղարշապատ գրեթէ աւերակ էր և ամայի մինչև 1620 թիւն:

Առաջին Շահապաղ յԱրեւանայ երկիրը արշաւելու ժամանակ, որ Օսմանցւոց ձեռքն էր 1604 թուին, Վաղարշապատայ Վաթուղիկէն բոլորովին ամայի էր. և ինչպէս թափուր էր տաճարն ի Միաբանութենէ, նոյնպէս և Վաղարշապատ ի բնակչաց. որովհետև Արարատեան աշ-

խարհի ժողովուրդը տարագիր եղած էր, երկիրը ևս ասպատակութեան մէջ՝ Պարսից Օսմանցւոց հետ պատերազմելու ժամանակին գրեթէ մինչև քսան և հինգ տարի 1604—1629, և Հայրապետական Աթոռն Աջմիածին ինչպէս ասացինք, իսպառ ամայի էր և անբնակ:

Առաքել ժամանակակից պատմիչ իւր պատմագրութեան ԻՊ. գլ. եր. 299. Վաղարշապատայ Վաթուղիկէի համար կգրէ այսպէս. «Աւ ասացեալ բանք որ ի մէնջ, ցուցանեն զտեղին (զՎաթուղիկէ Ակեղեցին) անբնակ զոլ ի մարդկանէ. և ասեմ զիսկն, ոչ էր անբնակ ամենեկն, այլ դու համարեան իբր անբնակ. վասն զի Վաթուղիկոսունքն անդ յԱջմիածին ո'չ բընակէին, այլ յԱրեւան քաղաքի ի Վաթուղիկէ Ակեղեցւոյն *), և կամ թէ ի շրջակայս նորա. բայց սեազուելք ոմանք սինլքորք և գոհհիլք որպէս զգիւղական հողագործս, որք վարնորդիւք մշակօք բընակէին յԱջմիածին, և զաւուրս տարւոյն զբազումս ի գիւղորայսն անցուցանէին քան թէ յԱջմիածին, . . . :

«Ապա Մովսէս վարդապետն, ասէ, եկեալ ի Գահրատայ, առեալ ի Շահապաղայ Առաջնոյ ղԱռսարարութիւն սրբոյ Աջմիածնի, մեծապատիւ փառօք և անպատում ցնծութեամբ . . . եկեալ և հաս յԱրեւան քաղաք՝ որ և ի սուրբ Աջմիածին, և առանց յապաղելոյ ձեռն ի գործ էարկ նորոգութեան սրբոյ Աթոռոյն ի թուականիս մերում Ռ. Հ. Օ. (յամի

(Այս գիւղը ամարանոց էր Վաթուղիկոսայ):
 Մողնի գիւղ վեց դանկ մուլք.
 Վաղարշապատ գիւղ վեց դանկ մուլք.
 Քիրաշլու գիւղ (ի Նիդ) վեց դանկ մուլք.
 Այս վեց գիւղը կ'անէ Մակուեցի Գրիգոր Վաթուղիկոսը:

(*) Անուն միոյ Ակեղեցեաց քաղաքին և այժմ ևս կոչի Վաթուղիկէ մերձ ի Պողոս Պետրոս Ակեղեցի:

1627). Ի Վարդապետի պահոց երկու-
 շարթի աւուրն, որպէս ասէ մարգարէն,
 արարին զՆորուսագէմ որպէս հիւզս մըր-
 գապահոց . . . ըստ այսմ էր և Աթոռն
 Լճմիածին. զի ամենևինք ունայնացեալ էր
 ի ստացուածոց և կողոպտեալ ի զար-
 դուց. ոչ գիրք, զի ո՛չ էր անդ ժամասա-
 ցութիւն, և կամ ընթերցումն. ո՛չ ըզ-
 գեսա և ո՛չ շուրջառ. զի ո՛չ էր ժամա-
 կարգութիւն և պատարագ. մինչ զի Վր-
 թիստոսի իջման տեղին և սուրբ սեղանն
 ո՛չ ունէին ծածկոցս. ո՛չ կանթիղք, զի
 ո՛չ գոյր լոյս, այլ հանապազ ի խաւարի.
 բայց այլազգի մահճտական ոմն վասէր
 զծրագ ձիթոյ և դնէր ի վերայ բեմին վա-
 սըն անցաւորաց ճանապարհորդաց, զի
 տեսանելով զայն, ողորմութիւն արաս-
 ցեն նմա. ո՛չ խնկարկութիւն, զի ո՛չ գոյր
 բուրվառ և խոունկ, և սալայատակ եկե-
 ղեցւոյն քանդքանդեալ, կրկալ որջ զեռ-
 նոց և սողնոց. և մեծամեծ լուսամուտքն
 զորս ունի, ամենն ի բաց կայր առանց
 վանդակի. ուստի մտեալ ի ներքս թըռ-
 չունքն ընդ ին կեկեղեցին ծրտովք և ծը-
 րովք և այլ գռեխօք, զոր ամենայն օր
 հարկիւ սրէաք, և ընդ այգն ի լուսանայն
 ձարնք թռչնոցն խափանէր զձայն ժամ
 ասելոյն , , :

“ Իսկ արտաքուստ կուսէ զլուխ Աս-
 թուղիկէին և տանիքն ամենայն և երեսք
 որմոյն քանդքանդեալք և շրջապատ աս-
 տիճանաքարքն փշրեալ և ծակոտեալ, և ի
 վաղմեայ ժամանակաց որ շուրջ զեկեղե-
 ցեաւն շինութիւն էր եղեալ և դարձեալ
 աւերեալ և ի վերայ միմեանց փլուզեալ
 էր, այնքան բարձրացեալ էր հողն և մօ-
 խիրն, որ յամն կողմանց շուրջ զեկեղե-

ցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր
 ազբիւնն և հողն ծածկեալ էր զհիմունս
 և զաստիճանս եկեղեցւոյն որք կան ար-
 տաքուստ կողմանէ , , :

“ Իսկ զարդք և սպասք և անօթք ե-
 կեղեցւոյն բնաւ ո՛չ գոյր. զի որ ինչ և
 լեալ էր ի հնոց ժամանակաց, Ասթուղե-
 կոսունքն զամենայն վաճառելով և գրաւ
 դնելով, վասնեալ էին. և արդ ևս գրաւ
 եղեալ անօթքն կային առ մահճտականս,
 զոր ազատեաց Մովսէս վարդապետն , , . . :

“ Եւ յորժամ Մովսէս վարդապետն
 սկիզբն արար նորոգութեան, տարակու-
 սէին վասն հողոյն և մոխրոյն որ բլրացեալ
 կայր շուրջանակի, թէ զիմրդ լինի պե-
 ղիւ. բայց որովհետեւ կամքն Աստուա-
 ծային քաղցրացեալ էր և ձեռնարկու-
 թիւնն նորին հաճութեամբն էր, զիւրա-
 հնար եղև բարձումն հողոյն. վասն զի
 ամէին զջուր ի գետոյն յորդ և վարար,
 և կապեցին ի կողմն ինչ հողոյն, և մշակ-
 քն փորէին զհողն և տային ջրոյն. որով
 ջուրն զհողն տանէր, և քարն մնայր. և ի
 սակաւ աւուրս բարձաւ հողն և բացաւ
 վայրն ամենայն, և մնացեալ քարինքն շա-
 րեցան ի յորմն տանցն, և ապա լայն և
 ընդարձակ պարիսպ պատեցին շուրջանա-
 կի յօրինեալ զբրդունս ութն ի նմա , , :

Մովսէս Արևնեցի առաջնոյն Շահապ-
 պազայ սիրելի լինելով, նրանից հրովարտակ
 առնելով լիակատար իշխանութեամբ ե-
 կաւ ի սուրբ Լճմիածին, և որովհետեւ սա
 առաջին նորոգողն կրաւ Ասթուղիկէին և
 Հայրապետական Աթոռոյ գրեթէ՛ երկու-
 հարիւր տարի ամայութենէն յետքը
 1445—1627, և յետ նորա ընդհանուր
 Ասթուղիկաք Ազգիս շարունակ յաջոր-

դուժեամբ և անմիջապէս նստան ի սուրբ Լճմիածին, ու պէսպէս շինութեամբք բարեզարդեցին զԱթոռն սուրբ Լճմիածին, մէք բոլոր նոցա նորոգութիւնքը և շինութիւնքը մի առ մի կգրենք մինչև ներկայ մեր Ա. Ե. հախառ Գ. Է. որդհանբական Աթուղիկոս ամենայն Հայոց. որոց արարքը ի սուրբ Աթուղիկէն Ա. աղարշապատայ և ի Հայրապետական Աթոռն սուրբ Լճմիածին՝ կանսնեն ընթերցողք ըստ կարգի:

Ինչպէս կերևի վերը յիշուած Առաքեալ պատմագրի վկայութենէն, յորմէ կանուս և Սիմէոն Աթուղիկոս իւր Տ. ամբռ մատենին մէջ, Մովսէս Աթուղիկոս առաջինն եղաւ որ Աթուղիկէ Ա. կեղեցին աւերանքէ ազատելու փութով, Շահապաղէն Փակակալութեան հրովարտակն առնելէն ետք յամին 1627, Աթուղիկէ Ա. կեղեցւոյ չորս կողմը եղած աւերանաց հոյակոյտը ջրին տալով, ընդարձակ քառակուսի պարսպով պատեց զայն, արեւմտեան կողմը կամարայարկ մեծամեծ դարպասներ կանգնեց. դէպ ի հիւսիս, և դէպ ի հարաւ՝ շինեց Աթուղիկոսարան. երկուքի միջոցը պարսպի արեւմտեան կամարայարկ մեծ դուռն կոփածոյ քարով՝ յանուն Տրդատայ, որ ուղղակի կանկանի Տաճարի արեւմտեան դրան հանդէպ:

Պարսպի հիւսիսային բաժնում շինել տուաւ ծայրէ ի ծայր միաբանից սենեակները իւրեանց կամարայարկ տալոններով մեծ մասամբ քարով և թրծած աղիւսով. իսկ արեւելեան կողմը կէս մասը խրցեր և հարաւային անկիւնը հացի փուռն և նորա պատկանեալ սենեակներ:

Հարաւային կողմը կանգնեց անտեսատունը, ամառուայ և ձմեռուայ սեղանատները, ամբարանոց ցորենոյ, դարու և այլ նիւթոց համար:—Այս ամեն շինուածքը բաց ամառուայ սեղանատանէն՝ կոփածոյ քարով և թրծած աղիւսով էին:

Աթուղիկէ Ա. կեղեցին զրեթէ ի հիմանէ նոր ի նորոյ նորոգեց՝ դմբէթը, տանիքը, առատաղը, սրմունքը ներքուստ և արտաքուստ նորոգեց, որոնք քանդուելու քարերը թափել էին. և տաճարի միջի սալայատակը բոլորը ևս կոփածոյ քարով շինեց. որովհետև այս ամենքը իսպառաւերուած էին՝ ինչպէս պատմիչն կվկայէ: Աւ այսպէս Սուրբ Աթոռն Լճմիածին պայծառացնելով, վերստին Միաբանութիւնը ժողովեց, որոնք Ա. կեղեցւոյ և մեծաստանի աւերանաց պատճառաւ ջրուած էին ի զիւզս և յաւանս¹⁾:

Հաստատեց և դպրատուն. յորմէ յառաջացան բազում շնորհալի Աղարապետք ըստ վկայութեան Սիմէոն Աթուղիկոսի, և այս՝ ինչպէս կերևի, ի Հովհաննապետի, ուստից Փիլիպպոս Աթուղիկոսը իւր օրով փոխադրեց աստ ի Սուրբ Լճմիածին:

Մովսէս Աթուղիկոսի այս ամեն շինութեանց ծախուցը՝ ձեռնտու էին մեր Ազգի երեւելի և կարող անձինք իրենց յօժարակամ արօքն և միջնորդութեամբ հոգեւորականաց, որոց շատը նորա իսկ աշա-

(1) Աղարշապատ գիւղը՝ զոր Գրիգ. Աթ. Մա. կուեցին գնեալ է, և տիրապետել էին Պարսիկք, սա քաղաքական դատարանով յետ առաւ, և Աթուոցս սեպհականեց.

կերտներէց էին, որոց առաջինը Փլիլիպպոսն էր՝ որ իւր վախճանին՝ իրեն յաջորդ կարգեց Մովսէս:

Աւ այս եղաւ երկրորդ նորոգութիւն Աթուղիկէ Ակեղեցւոյն և մենաստանին ու միաբանից հաստատութեան. յորմէ մինչև ցայսօր անընդհատ կշարունակի ¹⁾:

Փլիլիպպոս Աթուղիկոս երբ նստաւ յԱթոռ յամին 1633, Մովսիսի վախճանէն ետքը, Աթոռոյ մէջ որքան փայտէ շինուածք կային և աւերուած Պարսից և Օսմանցւոց պատերազմաց նրեսէն՝ ևս և յերկրաշարժութենէ, բոլորը վերստին նորոգեց. Ակեղեցւոյ տանիքը բաց ի զբմբէթէն՝ բովանդակ նորոգեց սրբատաշ քարով: Արևելեան կողմի սենեակները շինեց կամարակապ քարով և աղիւսով. որոց վերայ կանգնեց իւր Աթուղիկոսաբանը վայելուչ շէնքով՝ ամսուուայ սեղանատուներ զոր Մովսէս փայտով էր ծածկել, սա սրբատաշ քարով շինեց. Ակեղեցւոյ շրջապատը սալայատակ արաւ, նոյնպէս և Միաբանից սենեկաց յառաջը ծայրէ ծայր չորս կանգուն լայնութեամբ. Աթոռոյ դպրատուներ որ Յովհաննավանքն էր՝ այս միջոցիս Փլիլիպպոս փոխադրեց զայն ի սուրբ Աջմիածին և յԱթոռու մսհասատեց: Պարսպի հարաւային կողմը շինեց ձիթահանքը մեծ ծախսով Աթոռոյ և գիւղացւոց համար, ուր մերձակայ գիւղերէն կտաւաղ կրերէին ձէթ հանելու յօգուտ Աթոռոյս:

(1) Մովսէս Աթուղիկոսէն սկսած մինչև Սիմեոն Աթուղիկոսի վախճանը՝ Աթուղիկոսաց արած շինութիւնքը ի սուրբ Աթուղիկէ Չամբրու մատենէն կ'ըսողներ:

Ակեղեցին ևս խոնաւութենէ ազատ պահելու համար, ուստի կիլասուէր միշտ, պարսպի հարաւային դռան յառաջէն ըսկսած ի ներքուստ մինչև Վայիանէի վանքի հարաւային կողմը դէպ ի հանգամէջս, Վանքան փորել տուաւ ընդ երկրաւ, և ի տեղիս տեղիս հորեր բանալ տուաւ, ընդ որ եկեղեցւոյ տակէն ժողովուած ջուրը կելանէ դէպ ի հանդ, և կկոչուի (սառ + ան + ան), որ ինչպէս կգրէ Աիմէոն Աթուղիկոս, երկու օգուտ տուաւ, մէկ որ բաւական ջուր կելանէ յանդատանս, մէկ ևս՝ տաճարի միջին գիծութիւնը բաւականին պակսեց ¹⁾:

Այս միջոցիս որ ազգային գործով զընացել էր Փլիլիպպոս Աթուղիկոս ի Աստանդնուպոլիս, 1653, վերադառնալով յԱթոռս, Ակեղեցւոյ մեծ գանգակատունը սկսաւ շինել արևմտեան դռան վրայ կից Ակեղեցւոյն՝ գեղեցիկ քանդակազործ ծաղկանց և զանազան կենդանեաց փորուածով. որոյ շինուածքը հազիւ թէ հասցրի էր մինչև յառաջին յարկի ներքին կամարը, վախճանեցաւ 1655 թըուին ²⁾:

(1) Աթոռոյս գիւղերի անդաստանաց համար ևս հոգ կալաւ մեծ աշխատութեամբ. ուստի և միւս բարերարութեանց հետ մեծ ծախսով Արագած լեռան զլեւէն մինչև ութ ջրաղացի ջուր, որ դէպ ի հիւսիս Շիրակ գաւառը կթափէր շրջեց դէպ ի Քասաղ գետն Օշականայ և արքունի դատարանով գետի կէս ջուրը սեպհականց Աթոռոյս:

(2) Աաղարչապատ գիւղը՝ որ վերստին յափշտակել էին Ամիրկիւնէ նախարարի ժառանգները, Բ. Շահապագի հրովարտակով յետ կառնու Փլիլիպպոս ի սեպհականութիւն Աթոռոյս Օշական գիւղի հինգ դանկ մուլքն կգնէ Փլիլիպպոս Աթուղիկոս:

Յակոբ Աթուղիկոս Ջուղայեցի յաջորդ Փիլիպպոսի՝ արժանայիշատակ վարդապետին՝ արժանի աշակերտ, նորանից ետքը՝ նորա սխաճ զանգակատունը շինեց եռայարկ և աւարտեց ծաղկենկար փուրուածներով, կարմրագոյն տաշածու քարով, մեծ աշխատանք կրելով ծախուց կողմէն՝ և հակառակութիւն և արգելք երկրի բունաւոր իշխողէն այն դառն ժամանակին. բայց վերջապէս ամեն նեղութեանց համբերութեամբ յաղթելով, վայելուչ կաթուղիկէիւ կաւարտէ շինութիւնը յամի 1658. որոյ արձանագրութիւնը գրուած է Աթուղիկէի ներքին կողմը շուրջանակի:

Աթուղիկոսական տունը վայելչացնող Աթուղիկոսաներից մէկն էլ Ջուղայեցի Յակոբ Աթուղիկոսն եղաւ. և ամենից գրեթէ գերազանցեց Աթուր հարստացընելով գիւղերով ու կալուածներով. զորոնք գրամով գնեց և սեպհական մուլք հաստատեց Աթուոյս այնքան շենութեանց ծախուց հետ, ինչպէս կտեսնուի ծանօթութեան մէջ¹⁾:

Աթուոյ Միաբանք և Ալաղարշապատայ բնակիչք՝ որոնք ցայն վայր մեծ նեղութիւն կը կրէին մաքուր ջրոց պակասութենէն ամառ ժամանակ, և ձմեռը ցրտի սասա-

կութենէն, երբոր առունները բոլոր կասուին, Յակոբ Աթուղիկոս Աթուոյս այժմեան եղած քանքանը շինել տուաւ. զիւրի արեւմտեան հիւսիսի կողմէն մինչև Քասաղ գետը գրեթէ կէս ժամ հեռաւորութեամբ. և իրարու մերձ հորեր բանալով ականահատութեամբ, ջրերը սատի և անտի ժողովեց մի տեղ, և ընդերկրեայ ճանապարհով բերաւ յԱթուս. որոյ մի մասն ջուր արեւմտեան կողմէն կամոնի ներսի պարխապը յարբումն միաբանից, և կէս մասն մանելով ի Ահհարան և ի Ալաղարապան, կանցանէ գէպի մեծ լճակն, որով թէ ամառ և թէ ձմեռ ժամանակ մաքուր և սառն ջուր կրմպէին միաբանք և զիւրացիք մինչև այս տարիներս. բայց բաւական տարիներէ հետէ զիւղորայք և բընակիչք շատանալով և զեար զանազան առուններ բաժանուելով արքունական գիւղերու ենակչաց համար, ամառ ժամանակ Քանքանը բոլորովին կցամաքի, թող որ Աթուոյս կառավարչաց շահասիրութենէն և թուլութենէն, նախ քան զայն Ալաղարշապատու բնակիչք բնակութիւններ շինելով քանքանի վրայ, բոլորովին գրեթէ խանգարել են ճանապարհը, և ապաստան կմնամք ամառը՝ պղտոր ջրերին:

Աւրաղոյունլու գիւղ ի լանջս Արագածու. որոյ վեց դանկ մուլքն գնէ Յակոբ Աթ. իւր վարդապետութեան ժամանակին:

Միլիքի գիւղ յԱպարան. վեց դանկ մուլքն գնէ Յակոբ Աթուղիկոս:

Նորագիւղ յԵրևան. վեց դանկ մուլքն գնէ Յակոբ Աթուղիկոս:

Օշական գիւղ յոտն Արագածու. մի դանկ մուլքն գնէ Յակոբ Աթուղիկոս. որոյ հինգ դանկն գնել էր Փիլիպպոս:

(1) Գիւղորայք՝ զորոնք գնել է Ջուղայեցի Յակոբ Աթուղիկոս ի սեպհականութիւն Աթուոյս՝ ըստ գրելոյ Սիմէոն Աթուղիկոսին սոքա են:

Ամիրի գիւղ, որոյ չորս և կէս դանկ մուլքն գնէ Յակոբ Աթուղիկոս: Ի Գեղարքունիս:

Եայճի գիւղ ի Ծաղկունիս. վեց դանկ մուլքն գնէ Յակոբ Աթուղիկոս:

Բոխսնիս հանդէպ Անրերգու. զիւրացիք ընծայեն Աթուոյս յորդորանօք Յակոբ Աթուղիկոսի:

Յակոբէն ետքը երբ որ նստաւ Աղիազար Աթուղիկոս, յամին 1682, Աթոռոյ պարտքերը տալէն ետքը, տաճարի մէջ Իջման Տեղւոյ վրայ կանգնեց Աթուղիկէ հասարակ քարից չորս սիւնով, և հաստատեց սեղան Պատարաղի, որ յառաջագոյն քարորմով պատած էր, ուր և «Այրն ահաւոր», երևցած. իսկ տաճարի հիւսիւսային և հարաւային թևերը՝ որոնք կիսաբոլորակ խորաններ էին, հիւսիւսայինը բարձրացրեց տաճարի յատակէն եթերն աստիճան և կանգնեց սեղան զէպարեկէք, անուամբ սրբոյն Ստեփաննոսի. և հարաւայինը երեք աստիճանով սրբոյն Յովհաննու Մկրտչի անուամբ. որոց մէջ կկատարուին Ապիսկոպոսի ձեռնադրութեան հանդէսը: Այս պատճառաւ ևս Իջման Տեղի յառաջէն հաստատուն քարով հիւսիսից հարաւ կարեց, որ խաժամուժ ժողովուրդը յառաջ չի գայ. ուր և հասարակ օրերը միշտ ժամերգութիւնը կը կատարի:

Ե ինեց և երեք զանգակատուն փոքրիկ Աթուղիկէիւ ի տանիս տաճարին՝ մին յարեկէս Աստուածածնի սեղանոյ վրայ, երկուքը ևս հիւսիւս և հարաւ Ս. Ստեփաննոսի և Ս. Յովհաննու նորահաստատ սեղանների գլուխը:

Աղէքսանդր Աթուղիկոս ջուղայեցին ձմեռուայ սեղանատունը վերստին շինեց կամարայարկ կոփածոյ քարով և ծածկեց թրծած աղիւսով, որ հնացել էր. որ և մինչև ցայժմ հաստատուն կայ իւր յիշատակարանով:

Աղիազարու հասարակ քարով շինածը ի վերայ Իջման Տեղւոյն, Համասանցի Աստուածատուր Աթուղիկոսը փոխեց,

և նոր ի նորոյ կառոյց վայելչաձև մարմարոնեայ զեղիցիկ Աթուղիկէիւ չորս սեան վրայ. նոյնպէս աւագ սեղանոյ բեմի ճակատը ծայրէ ի ծայր մարմարոնեայ քարով շինելով, խորանաձև զարդարեց. ոսկով ու գոյնզգոյն նկարներով Իջման տեղւոյ Աթուղիկէն և աւագ սեղանոյ բեմը ի միասին ծաղկազարդեց:

Սա նորոգեց և տաճարի սալայատակը, մեծ Աթուղիկէի չորս մեծ սիւները. ըսպիտակացրուց բոլոր տաճարի մէջը, և առ հասարակ ոսկեզօծ գոյնզգոյն զեղիքով ծաղիկ տուաւ, որոյ արձանագրութիւնը Աթուղիկէի ներսի շրջանակումը զըրուած է յամին 1720, շրջապատ լուսամտաց ներքև:

Աւագ սեղանոյ մարմարոնեայ բեմի ճակատը, որ խորանաձև հատուած հատուած բաժանուած է, կարապետ Աթուղիկոսը երկստասան առաքելոց պատկերները նկարել տուաւ. մէջ տեղը Աստուածամայր՝ Յիսուս ի գրկին. երկու ծայրը՝ Ստեփաննոս և Փիլիպպոս սարկաւազունք, և շրջանակները ոսկեզօծ ծաղկազարդեց առաջուայ նման:

Երրասամ Աթուղիկոս Սճեցի պղնձեայ թափուածոյ վանդակով շրջապատեց Իջման տեղւոյ սեղանը մէջ առնելով չորս մարմարոնեայ սիւները ի թըւին 1732:

Սա ինքն Երրասամ կանգնեց աւագ խորանի կողմնահան սեղանները, հիւսիսային անուամբ Ս. Յակոբայ առաքելոյն, և հարաւայինը Ս. Լուսաւորչի, կամարակապ դրուագեալ փայտով, որոց փոքրիկ բեմերի ճակատը զարդարեց ծաղկենկարով և մարգարէական պատկերնե-

բով : Կկարել տուաւ նոյնպէս Տաճարի որմոց և սիւների վերայ եղած պատկերները ևս մեծագումար ծախսով :

Փոնատունը ևս շինեց սրբատաշ քարով նորա այլ ամեն հարկաւոր շինութեանց հետ :

Ղազար Աթուղիկոսը՝ որնստաւ յամին 1738, տեսնելով որ Փիղեպոս Աթուղիկոսի շինած Աթուղիկոսարանը հնացել է բոլորովին, մանաւանդ որ Եկեղեցւոյ արևելեան կողմը լինելով՝ անյարմար է բնակութեան, արևմտեան կողմը՝ շինեց նոր Աթուղիկոսարան երկյարկեան պարսպի դրան ներքին կողմը դէպ ի հարաւ. որոյ մեծ դուռը կանգնեց ամառուայ սեղանատան արևմտեան դրան հանդէպ. ընդ որ հանդիսաւոր օրերը Աթուղիկոսք կիջնէին ի սեղանատուն. այս դրան ձանապարհը Աթուղիկոսարանի ներքնայարկ սենեակների մէջէն լինելով, յետագայ Աթուղիկոսք փակեցին զայն. և նոյն սենեակները կէս մի արարին գանձատուն և կէս մի մառան Աթուղիկոսարանի : — Աթուղիկոսարանի շինութեան արձանագիրը դրուած է այս դրան վերայ յամին 1741 :

Եյս իւր շինած Աթուղիկոսարանի հիւսիսային կողմում գորգարեց Ղազար Աթուղիկոս և դեանանիստ շինուածք Աթուղիկոսաց ձմերնային բնակութեան համար, որոնք յետոյ Սիմէօն Աթուղիկոս արար բնակարան և տպագրատուն, ինչպէս կերևի նորա գործոց մէջ :

Հարաւային կողմը Մովսէս Աթուղիկոսի շինած պարսպէն դուրս՝ շինեց Ղազար կրկնայարկ և քառակուսի հիւրանոց, որ իւր անուամբ Ղազարապատ

կոչուեցաւ. սորա հարաւային կողմը պարսպեց կոփածոյ քարով և թրծած աղիւսով, և մէջ տեղը կանգնեց կամարապատ մեծ դուռն կոփածոյ քարով՝ հանդերձ շինութեան արձանագրով 1750 թուին :

Եյս ամեն շինուածքներէն ետքը թէ՛ Աթուղիկէ Եկեղեցւոյ պայծառութեան և թէ՛ մենաստանի հարկաւորութեան և վայելչութեան համար, ինչ էլ որ պակաս էր մնացել ցայն փայր ու կհարկաւորէր, այն ամենն էլ արժանիշատակ Սիմէօն և Ղուկաս Աթուղիկոսները շինեցին՝ պատրաստեցին և զրեթէ լրացրին. որոց գործքերն էլ կարգաւ պիտի նշանակենք :

Արգարե կարծես թէ լրացրին սոքա Եկեղեցւոյ և Աթուղիկոսական տան թերութիւնները, և այնքան շինութեանց մեծագումար ծախսերը հոգայէն ետքը այս երկու Աթուղիկոսք աշխարհի այն անիշխան և վրդոված ժամանակին՝ բաւականին ևս մեծ գումար դրամոց թողին յետագայ Աթուղիկոսաց ուսելու պաշար, որոնք գրամը փանելէն ու տունը քարուքանդ անելէն ետքն անգամ՝ քար քարի վերայ էլ չի կարողացան կամ չի կամեցան դնել, որ գոնէ իրենց հոգւոյն յիշատակ լինէր, և իրենց տնաքանդութեան արարքը աշխարհիս երեսին ծածկէր. ասած իս ճրչմարտութիւնը կգանեն ընթերցողք Վաւթի և Վանիէլի գործոց մէջ : — Մենք Սիմէօնի և Ղուկասու արարքը զրենք ի Ս. Աթուղիկէն :

Մովսէս Աթուղիկոսի շինած այս է Եկեղեցւոյ շրջապատ պարիսպը շատ անձուկ էր, և միայն Միսրանից բնակարանը և տանը վերաբերեալ հորկաւոր շինուած-

քը կպարունակէր իւր մէջ, որք անհրաժեշտ հարկաւոր էին. իսկ այլ ամենայն կարեւոր շինութիւնք արտաքոյ էին պարտաւոր, ամբարը, անասնոց գոմը, մաքարը, խոտատեղը և այլ այսպիսիք. ըստ որոյ և միշտ երկիւղեմ մէջ էին Միաբանք, շատ անգամ Աթոռոյ և ուխտաւորաց ձիերը կտանէին գողք՝ որոց համար իսկ Սիմէօն Աթոռեկոս իւր ջամբռ անուանեալ մատենի մէջ գրէ ¹⁾, յորմէ կատիպուի մեծ պարիսպը շինել:

«Սուրբ Աթոռն նախապէս, կգրէ, ի յարաքուստ կուսէ էր անպարիսպ, և գոմք և ամենայն անասնատունք և այլ համբարք հարկաւոր արտաքին իրաց՝ էին հնացեալ, անվայելք և անյարմարք, մանունք և գծուծք, և մանաւանդ ցան և ցիր, երկիւղալիք և կասկածաւորք ի գողոց և յասպատակչաց. բազում անգամ գձիս և զայլ անասունս հիւրոց և սրբոյ Աթոռոյս իսկ տանէին գողք»:

Երկրորդ՝ Ազգարչապատ գիւղը մենաստանի արեւմտեան կողմէն պարսպին կից լինելով, անմիջոց և խառն ի խուռն շէնքերով շրջափակել էր Աթոռը. ուստի և մեծ անվայելութիւն կրեւէր նորան: Այս երկու պատճառէն ստիպեալ Սիմէօն Աթոռեկոս, մենաստանը շուրջանակի պարտաւոր քառակուսի ընդարձակ հաստատուն պարսպով, ի ներքուստ հիմանց երեսէն երեք կարգ սրբատաշ կոփածուքարով, մնացած շէնքը ամբողջ կանգնեց աղիւսով, մեծամեծ բուրգերով, և

գիտանոցով. անասնոց գոմը, և այլ ներսի պարսպէն դուրս՝ շէնքերը մէջ առնելով, նոր ի նորոյ շինեց արեւելեան կողմը միատեղ հիւսիսային բաժնոււմը. և գիւղը քակելով, բոլոր բնակութիւնը փոխադրեց հիւսիսային կողմը բաւական հռիւր պարսպէն, և աներն ու եկեղեցին Աթոռոյ արդեամբքը շինեց, ինչպէս յիշած եմք Ազգարչապատայ պատմութեան մէջ: — Պարսպի շինութեանց և գիւղի Ակեղեցոյ արձանագիրք գրուած են իւրաքանչիւրոց դռների վերայ, հանդերձ թւաւանով:

Երեք մեծ դուռն ունի պարիսպը կամարայարկ կոփածոյ քարով. որոց մեծ և փառաւորն է հիւսիսի կողմից, որ կհայի դէպ ուղիղ գիւղի վերայ. մին արեւելեան հարաւ, որոյ վերայ շինութեան արձանագիրը 1766 թուին. երրորդն յարեւմտից՝ Ազգարապատի կցուրդը. չորրորդն փոքր նոյնպէս արեւմտից՝ դուռն բաղանեաց, զոր և ինքն Սիմէօն շինած է պարսպի արեւմտեան հարաւային անկիւնում:

Ակեղեցոյ տանիքը ամբողջ սրբատաշ քարով նորոգեց. և երկու խորանաց առաստաղները բանալով, վերնատուն շինեց իբրև պահարան՝ յամին 1770:

Ամառուայ սեղանատունը սա վերստին շինեց կամարայարկ և բոլորովին սրբատաշ քարով, որ Փիլիպպոս Աթոռեկոսի շինութենէն մինչև սորա ժամանակ հնացել էր, և մերձ էր փլչելու: — Վարատունը և ս զոր Փիլիպպոս շինել էր պարսպի ներսը նեղ և անձուկ և անյարմար ըստ տեղոյն, որպէս և Աթոռոյ մոմատունը, իսկ երկուքը և ս նոր ի նորոյ շինեց առանձին՝ Միաբանից խցերի ետեւը հին և նոր պա-

(1) Ջամբռ մատենան որ յիշատակարան է անցից Աթոռոյս և բոլոր կալուածոց, տպագրուեցաւ յանցեալ 1873 ամին:

րապի միջոցը հիւսիսային արեւելեան անկիւնում:

Վաթուղիկոսարանի կողմը շինեց երկշարկեան դարպաս դեղեցիկ, իբրև ամառանոց Վաթուղիկոսի, և իբրև միջորմն Ղազարապատէն դէպ ի Վեհարանը տաճկաց և այլ հիււրոց տեսութիւնը արգելելու, որոնք յաճախ կը պատահէին յԱթոռս:

Իսկ հիւսիսային կողմէն, ուր արդէն Ղազար Վաթուղիկոս կանգնած էր ձմեռուայ բնակարան, վից գազաչափ մէջ առնելով, քարվանսարայ ասացեալ շուկայի բաժնէն, յիշեալ շինութեանց կից շինեց տասն սենեակ նոցա լայնութեան և այլ պիտոյից համար. որոց արեւմտեան կողմի սենեակներում հաստատեց Աթոռոյս տպարանը ինչպէս յիշեցինք Ղազարու գործոց մէջ, իւր ամեն պարագայ յիւք, արձանագրելով դրան ճակատի վերայ 1771. ուստի և հեռաւոր երկիրներէ մեծամեծ ծախուք թուղթ չի բերելու համար, շինել տուաւ և թղթի գործարան Ղազարապատի դրան հանդէպը պարսպէն դուրս ի հարաւ. յորում յառաջին շինած թղթովը տպեց իւր Պարտավճար գիրքը յամին 1776:

(Շարունակէի)

ԱՐԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ.

Այս տարի լոյս տեսաւ Տիփսոսում այս անուամբ մի նշանաւոր երկասիրութիւն Պ. Ստեփաննոսի Պալասանեանց, որ առաջին գործն է հանդիսանում իւր տեսակի մէջ:

Դեռ չի ստաց Պ. Պալասանեանի այս աշխատութեան մասին, աւելորդ չեմք համարում կանխապէս մի քանի խօսք ասել Մայրենի լեզուի վերաբերութեամբ յառաջացած կարծեաց վերայ:

Այն օրից՝ երբ Հայ գրականութիւնն սկսում է ժողովրդական դառնալու հակամիտութիւն և յաջող փորձեր ցոյց տալ, Հայ գրագիտաց մէջ յառաջանում է մի նշանաւոր ըստ երևութիւն կարի դժուարացուցիչ հարց. և այս՝ ժողովրդական լեզու ունենալու հարցն է լինում. որ հետզհետէ զնալով արծարծւում է և համայնագրաւ նշանակութիւն ստանում:

Մեզ մտիկ է դեռ այն անցիալը, որ այդ հարցի նկատմամբ տարակարծիք ազդողակներ և յուզմունքներ էր յարուցանում մեր պարբերական հրատարակութեանց մէջ, կազմելով երկու միանգամայն տարբեր համոզմունքի կուսակցութիւններ նորութեան և հնութեան, — աշխարհարարի և գրաբարի պաշտպանների, և փոխադարձաբար ատեցողների:

Թէ առաջին և թէ երկրորդ կուսակցութիւնն, — թէ նորասերներն և թէ հնականներն հասնում էին ծայրահեղութեան. մէկը տարապայմանօրէն արհամարհելով հնոյն կարևորութիւնն և գործադրութիւնն, որ արդէն իբրև մեռեալ և ժանգոտեալ պէտք է խալաւ երեսից ձգել. և նորան փոխանակել ժողովրդեան ըմբռնելի, մատչելի լեզուն. — Մայրենի կենդանի բարբառը, որին հարկաւոր է մշակուիլ և կանոնաւորուիլ. իսկ միւրը յուսահատաբար ժխտելով այդ լեզուի գրականական դառնալու կարելիութիւնն որ իւր բարեկրնական բազմաճիւղ բաժանմամբը, իւր ըրրտ և վայրենի կազմաւածովն ոչ այլին է ներկայացնում, և թէ ոչ մի աղանդակ խառնածնունդ մի անկերպարան կիսակենդան հրէշ. միայն ռամիկ ժողովրդի սակաւապէտ զգացմունքը յայտնելու պիտոյացող, որին երբէք չպիտի յաջողի մտնել սահմանի և կոպարի տակ:

Հարցը ժամանակի և փորձառութեան ծնունդ և իրական կենաց պիտոյից ու պահանջմանց յարմարցրած լինելով, չէր կարող երկար առանց բաւականացուցիչ վճռոյ մնալ. և ահա փորձը լուծում է ամենայն տարակուսութիւն. աշխարհիկ